ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի « Սալլիի հիմնական դպրոց»ՊՈԱԿ – ի դասվար (18 դասաժամ), ֆիզիկա (4 դասաժամ), քիմիա (4 դասաժամ), տեխնոլոգիա (2 դասաժամ) , մաթեմատիկա(17 դասաժամ) , կերպարվեստ(2 դասաժամ) ,երաժշտություն(3 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում /ձև 1/
- 1 լուսանկար 3 x 4 չափի
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ/ դիպլոմ /
- Անձը հաստատող փաստաթուղթ
- « Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26- րդ հոդվածի 1- ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/:
- Ինքնակենսագրություն / ձև 5 /
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ- ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր / առկայության դեպքում /,
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 04- ից մինչև սեպտեմբերի 15- ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00 – ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20 – ին՝ ժամը 14:00- ին Վայոց ձորի մարզի Սալլիի հիմնական դպրոցի շենքում: Հասցե՝ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, գյուղ Սալլի փողոց2, շենք 3: Հեռախոս 093493626: